ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,094456283

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 17 » սեպտեմբերի 2021 թվականի N 13

*ՀԱՅՐԱՆՈՒՆԻ ՈՒՂՂՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ*

Հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Վրույրի Քոչարյանի դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Առաջին պետական գրանցման ժամանակ Քարաբերդի համայնքապետի կողմից տրված քաղվածքում տեղի է ունեցել հայրանունի սխալ՝ Հայկան Միքաելի Քոչարյանի ( ծնված 08.12.1928թ..) փոխարեն պետք է լինի Հայկան Մուխաելի Քոչարյան ( Մահվան վկայական ԱԱ N 073933 ծնված 08.12.1928թ) :

*ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ՝*

2. Հայկան Միքաելի Քոչարյանը ( ծնված 08.12.1928թ.) նույն ինքը Հայկան Մուխաելի Քոչարյանն է (Մահվան վկայական ԱԱ N 073933 ծնված 08.12.1928թ.) :

Դիմել ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի վկայականներում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Համայնքի ղեկավար Յուրիկ. Շավելյան

17 սեպտեմբերի 2021թ
գ. Քարաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք, հեռ.094456283

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 17 >> սեպտեմբերի 2021 թվականի N 14

## <<ՖԻՐՄԱ ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ԻՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով,ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը/ ենթակետով,հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 05.12.2012թ. <<ՖԻՐՄԱ ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/110 թույլտվությունը և 05.12.2012թ. թիվ ԼՎ-110 լեռնահատկացման ակտը և Քարաբերդ համայնքի ավագանու 17 սեպտեմբերի 2021 թվականի ավագանու թիվ 7 որոշումը`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ՖԻՐՄԱ ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով մինչև 05.12.2024թ., առանց մրցույթի տրամադրել Քարաբերդ համայնքի Սպիտակ Աղբյուրի 1 հասցեում գտնվող 1.01492 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 06-108-0105-0004 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը` ընդերքօգտագործման նպատակով:
2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
3. <<ՖԻՐՄԱ ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքների պետական գրանցումը իրականացնել << ՖԻՐՄԱ ԳՐԱՆԻՏ >> ՍՊԸ-ի միջոցների հաշվին:

Համայնքի ղեկավար Յուրիկ Շավելյան